ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի բացման նիստի/

ք. Երևան

«30» օգոստոսի 2017թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էլլադա Արզաքանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» կետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.**

Գնահատող հանձնաժողովի նիստին ներկա էր գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցություններին հրավիրված մասնակիցը: Հանձնաժողովը որոշեց գների նվազեցման շուրջ կազմակերպել բանակցություններ՝ բանակցությունների համար սահմանելով 30/երեսուն/ րոպե ժամանակ.

1.1 Կազմակերպված բանակցությունների արդյունքում՝ մինչև բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտը՝ Մասնակիցը հրաժարվեց նվազեցնել 4-րդ և 6-րդ չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. **Տեղեկատվություն՝ ընթացակարգը 1-11-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

✓ 1-11-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին).

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. **Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

- ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին):
- հաստատել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Է. Արզաքանյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Արմենակյան

(ստորագրություն)

Կ. Մելքոնյան

(ստորագրություն)

Ա. Ալիխանյան

(ստորագրություն)

Ա. Բուդուլյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Դ. Թովմասյան

(ստորագրություն)